ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի Բուժող Ընտրությունները
Մաս 3

Ընտրել Իրականությունը: Գիտակցեմ, որ ես Աստված չեմ: Ընդունեմ որ անզոր եմ կառավարելու սխալ բաներ անելու իմ հակումը և որ իմ կյանքը անկառավարելի է:

Ընտրել Հույսը: Լրջորեն հավատամ, որ Աստված գոյություն ունի և ես նրա համար կարևոր եմ, և որ նա զորություն ունի ինձ օգնելու որ փոխվեմ:

Հանձնման Ընտրություն: Գիտակցաբար ընտրեմ հանձնել իմ ամբողջ կյանքը և կամքը, որ Հիսուսը հոգա և կառավարի այն:

«Երանի հեզերին, որ նրանք կ'ժառանգեն երկիրը.» Մատ 5:5

Հեզություն նշանակում է կառավարված զորություն

«Քրիստոս օրինակ թողեց որ նրա հետքերին հետևեք. Որ մեղք չ'գործեց, և նենգություն չ'գտնվեցավ նրա բերանումը. Որ նախատվելիս՝ փոխարենը չէր նախատում. չարչարվելիս՝ չէր սպառնում, բայց դատաստանը հանձնում էր արդար դատավորին.» Ա Պետրոս 2:21-23

Հեզությունը միշտ եղել է Աստծո ճանապարհը մարդկության համար

(Հոբ 5:11, Թվոց 12:3, Սաղ 25:9, Եփես 4:1-2, Կող 3:12, Տիթոս 3:1-2)

«Եվ Մովսես մարդը շատ հեզ էր երկրի վրա եղած բոլոր մարդկանցից ավելի:» Թվոց 12:3

Հեզություն նշանակում է, որ ես գիտակցում եմ Աստծո Սրբությունը

- Վստահությունը թե Ո՞վ եմ ես

«Զեր Եհովա Աստվածը աստվածների Աստվածն է և տերերի Տերը, այն մեծ, հզոր և ահեղ Աստվածն է.» Երկր. Օրինաց 10:17

- Վստահությունը թե Ու՞մն եմ ես

«Ամեն ով որ հավատում է թե Հիսուսն է Քրիստոսը, Աստվածանից է ծնված.» Ա Հովհաննես 5:1ա

Գիտակցաբար - Այս իմ որոշումն է

Որոշել եմ հանձնել - Կրկին ու կրկին

«Դուք չ'գիտե՞ք, թե ում որ ձեր անձերը ծառա եք ներկայացնում՝ նրան հնազանդելու, ծառաներ եք նրան որին հնազանդում եք. թե մեղքին՝ դեպի մահ, և թե հնազանդության՝ դեպի արդարություն:» Հռովմայեցիս 6:16

իմ ամբողջ կյանքը և կամքը - Ամեն ինչ

«Արդ այսպես էլ ձեզանից ամեն մեկն, որ իր բոլոր ինչքիցը չ'հրաժարվի, չի կարող ինձ աշակերտ լինել:» Ղուկաս 14:33

Քրիստոսին, որ նա հոգա և կառավարի այն - Նա սիրում է ինձ

«Ինձ մոտ եկեք, ամեն վաստակացներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կ'տամ ձեզ:» Մատթեոս 11:28

Հանձնման Ընտրություն: Գիտակցաբար ընտրեմ հանձնել իմ կյանքը և կամքը, որ Հիսուսը հոգա և կառավարի այն:

«Ես եկա որ կյանք ունենան, և էլ ավելի ունենան:» Հովհ 10:10բ

Հաջորդ Քարոզի Թեման

ՄԱՔՐՎԵԼՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի Բուժող Ընտրությունները

Հովիվ Սարո Խաչիկեան